ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/292

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Մասնակից՝ «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3» էլեկտրոնային աճուրդ, ապրանքների ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԷԱՃԱՊՁԲ-7/3-1»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 01.1/26-1/14617-2020 գրությամբ «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 22.09.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2959-2020 գրության հիման վրա, 28.09.2020թ.-ին «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 25.12.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 25.12.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/292 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել www.gnumner.am կայքում:

20.01.2021թ.-ին և 25.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 20.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.01.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 22.09.2020թ.-ի թիվ ՊՆ/Պն/02/2959-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման պայմանագրերի 2.1.7.1 կետերի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. սեպտեմբերի 15-ին միակողմանի մասնակի լուծել է՝

1. Ա/Ձ Աբգար Ավետիսյանի հետ 28.12.2018թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-7/2-1 գնման պայմանագրին կից 16.06.2020թ կնքված համաձայնագիրը:

2. «Արմեն-Համիկ Եղբայրներ» ՀՁ ՍՊԸ-ի հետ 04.12.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/8-1 գնման պայմանագրին կից N 1 համաձայնագիրը:

3. «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի հետ 26.02.2019թ. կնքված N ԷԱՃԱՊՁԲ-7/3-1 գնման պայմանագրին կից 30.06.2020թ. կնքված համաձայնագիրը:

4. «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի հետ 21.05.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-8/4-5 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի և համաձայնագրերի լուծման վերաբերյալ գրությունները 17.09.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.12.2020թ.-ի գրությամբ դիմել է «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 01.1/26-1/14617-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին, ինչպես նաև չի ներկայացրել գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2020/292 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի միջև 26.02.2019թ.-ին կնքվել է թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/3-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը կիրականացվի համապատասխան

ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում:

iii. ՀՀ պաշտպանության նախարարության և «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի միջև 30.06.2020թ.-ին կնքվել է թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/3-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի փոխադարձ համաձայնությամբ մասնակի լուծելու մասին համաձայնագիր (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

iv. Համաձայնագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը պետք է իրականացվի ապրիլ ամսին:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 17.09.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/4295 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի միջև 26.02.2019թ.-ին կնքված N «ԷԱՃԱՊՁԲ-7/3-1» ծածկագրով գնման պայմանագրին կից 30.06.2020թ.-ին կնքված համաձայնագրի շրջանակներում Մասնակիցը 2020թ.-ի ապրիլ ամսին պետք է մատակարարեր 3000 կգ ջեմ 352,9 դրամանոց և 3000 կգ ջեմ 333,78 դրամանոց, սակայն չի մատակարարել:

Հիմք ընդունելով N «ԷԱՃԱՊՁԲ-7/3-1» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ.-ի սեպտեմբերի 15-ին միակողմանի լուծել է Համաձայնագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.12.2020թ. թիվ 01.1/26-1/14617-2020 գրությամբ «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 40 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել

մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի միջև 26.02.2019թ.-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/3-1» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի միջև 30.06.2020թ.-ին կնքված թիվ «ԷԱՃԱՊՁԲ-7/3-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի փոխադարձ համաձայնությամբ մասնակի լուծելու մասին Համաձայնագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ մատակարարումը պետք է իրականացվի ապրիլ ամսին:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 17.09.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՆՏԱ/4295 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի միջև 26.02.2019թ.-ին կնքված N «ԷԱՃԱՊՁԲ-7/3-1» ծածկագրով գնման պայմանագրին կից 30.06.2020թ.-ին կնքված համաձայնագրի շրջանակներում Մասնակիցը 2020թ.-ի ապրիլ ամսին պետք է մատակարարեր 3000 կգ ջեմ 352,9 դրամանոց և 3000 կգ ջեմ 333,78 դրամանոց, սակայն չի մատակարարել:

Հիմք ընդունելով N «ԷԱՃԱՊՁԲ-7/3-1» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ.-ի

սեպտեմբերի 15-ին միակողմանի լուծել է Համաձայնագիրը (խախտվել են մատակարարման ժամկետները):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ տվյալ դեպքում, «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի և դրա հիման վրա 30.06.2020թ.-ին կնքված Համաձայնագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսված ժամկետում ապրանքը չէր կարող մատակարարվել ապրիլ ամսին, քանի որ Պատվիրատուի և Մասնակցի միջև 2020թ.-ի ապրիլ ամսին իրականեցվելիք մատակարարման վերաբերյալ համաձայնագիրը կնքվել է ավելի ուշ՝ 30.06.2020թ.-ին:

Այլ կերպ ասած՝ Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված այն դրույթը, որ մատակարարումը պետք է իրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք համաձայնագրով սահմանված ժամկետում, իրենից ենթադրում է, որ կնքվելիք համաձայնագրով պետք է նախատեսվի այնպիսի օբյեկտիվ ժամանակահատված, որը հնարավորություն կտա Մասնակցին իրացնել իր՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ և ժամանակին կատարումը, և ընդհակառակը, համաձայնագրի կնքմամբ Մասնակիցը չպետք է զրկվի վերը նշված իր իրավունքների իրացման օբյեկտիվ հնարավորությունից:

30.06.2020թ.-ին կնքված Համաձայնագրով Պատվիրատուն չէր կարող Մասնակցից պահանջել կատարելու իր՝ 2020թ.-ի ապրիլ ամսվա մատակարարման պարտականությունը:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Համաձայնագիրը և դրա հավելվածը ստորագրված են Մասնակցի լիազորված անձի կողմից, ում լիազորությունների վերաբերյալ համապատասխան հավաստումը՝ լիազորագիրը, սույն գործում բացակայում է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 28.09.2020թ.-ի թիվ 01.1/26-1/14617-2020 գրությամբ «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/292 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ